

## Արձանագրություն հ. 3

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի  
26.04.18 թ. կայացած նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 36 անդամներից 25-ը:

### Օրակարգում՝

1. <<Սահմանադրականության գնահատման հետազոտական ծրագիր >> գիտական թեմայի կատարման հաշվետվություն (զեկուցող՝ թեմայի գիտական ղեկավար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ.Լ.Սարգսյան):
2. Հեռակա ուսուցման արդյունավետության բարձրացման խնդիրները (զեկուցող՝ ղեկանի տեղակալ, տ.գ.թ., դոցենտ Ա.Ռ.Ներսիսյան):
3. Դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման վերաբերյալ ուսանողների հարցման արդյունքները (զեկուցող՝ ղեկանի տեղակալ, տ.գ. թ.Գ.Ա. Բարխուդարյան):
4. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի առաջին հարցը գիտական զեկուցում էր: Թեմայի գիտական ղեկավար, պրոֆեսոր Հ. Սարգսյանը ներկայացրեց սահմանադրականության գնահատման մեթոդաբանական հիմնադրույթները:

Զեկուցման շուրջ ծավալվեց հետաքրքիր գիտական բանավեճ, գիտխորհրդի անդամներ ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Գ.Ղարիբյանը, պրոֆեսորներ Հ.Սարգսյանը, Վ.Բոստանջյանը, Ռ.Գևորգյանը, իրենց մոտեցումներն արտահայտեցին զեկուցման հիմնախնդիրների վերաբերյալ:

### **Որոշեցին զեկուցումն ընդունել ի գիտություն:**

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ղեկանի տեղակալ Ա.Ներսիսյանը: Նա խոսեց հեռակա ուսուցման կազմակերպման մասին: Նա ասաց, որ եթե հաջողվի նոր ընդունվող ուսանողների թիվն ավելացնել, ապա հավանական է, որ հեռական նույնպես կունենա բակալավրիատում <<ֆինանսներ>> մասնագիտություն:

Ա.Ներսիսյանը նշեց որոշ նկատառումներ:Դրանք են.

- Լույս են տեսել հայերեն լեզվով դասագրքեր և ձեռնարկներ, որոնք նպաստում են կրթության որակի բարձրացմանը,
- Համատեղողներին նպատակահարմար չէ ներգրավել հեռակա ուսուցման համակարգում դասավանդելու, որովհետև դասաժամերը քիչ են և եթե նրանք մեկ կամ մի քանի դաս բաց են թողնում, դա ազդում է ուսուցման որակի վրա,
- Ամբիոնների ծանրաբեռնվածությունը հեռակայի գծով նույն դասախոսի վրա չպետք է դրվի,
- Մագիստրատուրայ ուսումնական պլանների փոփոխությունները կատարել նաև հեռակա ուսուցման համար,
- Հնարավորինս վերացնել միջանկյալ քննությունները:

**Նիստը որոշեց ի նկատ ունենալ նշված առաջարկությունները:**

Օրակարգի 3-րդ հացի վերաբերյալ զեկուցեց դեկանի տեղակալ Գ.Բարխուդարյանը; Նա ներկայացրեց ուսանողների հարցումների և դասավանդման որակի վերաբերյալ իր նկատառումները և հիշեցրեց, որ դրանց արդյունքները պետք է քննարկվեն ամբիոններում և համապատասխան հետևություններ արվեն:

Ընթացիկ հարցերի շրջանակում հաստատեցին հեռակա ասպիրանտ Է.Ա.Պետրոսյանի գիտական ղեկավարը և ատենախոսության թեման:

Գիտլտրիդիկի նախագահ,  
ու.գ.դ., սլլոֆետար



Հ.Լ.Սարգսյան

Գիտլտրիդիկի քարտուղար,  
ու.գ.թ., սլլոֆետար

Ա. Հ. Համբարձումյան